# Պետրոս Դուրյան

## Ի գերեզմանն ամենասիրելվո Վարդան Լութֆյանի

Ո՜հ, երկնքի ժապավեններ՝
Ճառագայթնե՜ր՝ միացուցած
Էին սրտերը մեր միմյանց՝
Մեր սրտերը սիրանըվեր:

Նոքա միմյանցս համար քանի՞
Էին անհո՜ւն բա՛ց մատյաններ,
Հոն ամեն բառ խորքը մը ուներ
Իր ներքևը սիրո, ցավի:

Ո՜հ, կը հիշե՞ս, Չամլըճայի
Սարը նստած լո՜ւռ մըխայինք,
Ուր շուք տային մեզի նոճիք՝
Սև հովանոցք վշտահարի:

ԸՍթամպոլի կապույտ գոտվույն՝
Վոսփորի ծուփը դիտեինք,
Ուսկից և մերթ զ՝անամպ երկինք.
Ո՛, ախորժնե՜ր լուռ մեր հոգվույն:

Այն հյուսկենները երկնքին՝
Այն ամպերը ձյունաթորմի՝
Մինչ երեկո, ո՜հ, մի առ մի

Մեր նայվածքը գրրավեին:

Չ'էինք խոսեր, խոսքն մեր հոգվոց
Անհունությունը կը պղծեր,
Մենք զերթ երկու տժգույն բոցեր
Իրարու մեջ կ'այրեինք սոսկ:

Մեր հոգիքը նոճիներու
Թուխ թիթեռներ էին տրտում,
Սև՛ ծրծեինք՝ սո՛ւգ անհատնում,
Նայեինք միշտ երկրես հեռու:

Անհուսությո՛ւն, գերեզմանի
Այդ սև կաթը շատ ըմպեցինք,
Քեզ հափրեցուց այդ ըմպելիք,
Եղար երկնից տժգույն որդի:

Քու դալուկդ՝ զիս ցավցուց շա՛տ,
Եվ նայվածքդ վերջին նըվաղ՝
Ջ'որ ուղղեցիր ինծի, ավա՛ղ,
Բևեռացուց յ'իս հիշատակդ:

Երջանի՞կ ես հոդ թե թշվառ,
Ջվարթնո թևով լուր մ'ինձ դրկե,
Ա՛հ, այս աշխարհն միշտ տաղտուկ է…
Ցավերու մեծ մայր մ'է աշխարհ:

Ո՛հ, եթե հոդ ծառի մը շուք
Կա և նորա քով մեկ վըտակ,
Եթե կա հոդ սե՛ր անապակ,
Կան ազատ օդ, ազատություն:

Ո՛հ, կը թոթվեմ ես այս աղտոտ

Ձորձն հոգվույս՝ կյանքս՝ մինչ իսկ այսօր,
Հող կը հագնիմ, հո՜ղ սրգավոր…
Ա՛հ, ուզածներս, Վա՛ղդան, կա՞ն հող…:

1871

---